



Երևանի կենդանաբանական այգու աշխատակիցները Չեխիայում մասնակցեցին Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի (EARAZA) 19-րդ կոնֆերանսին



Մայիսի 26-ից 30-ը Չեխիայի Հանրապետության Բոնո քաղաքում տեղի ունեցավ Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի (EARAZA) 19-րդ կոնֆերանսը, որին մասնակցում էին նաև Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը, անասնաբույժ Աննա Ասատուրյանը և գիտամեթոդական բաժնի պատասխանատու Հռիփսիմե Խաչատրյանը: Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի (EARAZA) 19-րդ կոնֆերանսը զուգահեռաբար էր Բոնոյի կենդանաբանական այգու հիմնադրման 60 ամյակի հետ:

Կոնֆերանսի նպատակն էր նպաստել տարածաշրջանի կենդանաբանական այգիների զարգացմանը, ապահովել անհետացման եզրին գտնվող կենդանատեսակների պահպանումը և կորոզի-նացնել այգիների աշխատանքները հազվագյուտ կենդանիների բազմացման ուղղությամբ:



Կոնֆերանսին մասնակցեցին շուրջ 70 կենդանաբանական այգիների 240 աշխատակիցներ Ռուսաստանի Դաշնությունից, Բելառուսից, Չեխիայից, Եստոնիայից, Իսրայելից, Ղազախստանից, Ադրբեջանից, Ուկրաինայից, Մոլդովայից, Լեհաստանից, Հայաստանից և այլն: Այցի շրջանակներում Չեխիայի հանրապետության տարբեր կենդանաբանական այգիներում կազմակերպվեցին մի շարք էքսկուրսիաներ: Կոնֆերանսի ընթացքում կազմակերպվեցին կլոր սեղաններ և քննարկումներ հետևյալ թեմաներով՝

- Կրթությունը և լուսաբանումը կենդանաբանական այգիներում,
- Արջերի բազմացման խնդիրները կենդանաբանական այգիներում,
- Նոր կառույցներ և նոր էքսպոզիցիաները կենդանաբանական այգիներում,
- Հազվագյուտ կենդանատեսակների պահպանման ծրագրեր:

Կրթությունը և լուսաբանումը կենդանաբանական այգիներում թեմայով քննարկման ժամանակ որպես նորույթ ներկայացվեց Երևանի կենդանաբանական այգու «Ձու» ամսագիրը:

EARAZA-ի հերթական՝ 20-րդ կոնֆերանսը տեղի կունենա 2014 թվականին Մոսկվայում, որը համընկնում է Մոսկվայի կենդանաբանական այգու հիմնադրման 150 ամյակի հետ:

Հունիսի 1-ը նշվեց նաև Երևանի կենդանաբանական այգում



Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը, Երևանի կենդանաբանական այգին կրկին իր փոքրիկ այցելուների համար կազմակերպել էր մի շարք անակնկալներ: Տոնական միջոցառումների մեկնարկը տրվեց առավոտյան ժամը 10:00-ին: Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը, HSBC Հայաստան բանկի նախկին տնօրեն Ասթորի Քլիֆորդի և Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆերնի և իր տիկնոջ մասնակցությամբ պաշտոնապես բացեցին պտավոր բորենու ընդարձակ, 650 քմ տարածք ընդգրկող, Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի (EARAZA) չափանիշներին համապատասխանող նոր ազատավանդակը, որի կառուցմանը աջակցել է տիկին Քլիֆորդը: Երևանի կենդանաբանական այգու տնօրենի ցանկությունը կենդանիներին վանդակներից ազատավանդակներ տեղափոխելն է, ինչը հնարավոր կլինի միայն գործընկերների օժանդակության շնորհիվ: «Հուսով եմ, որ մոտ ապագայում այգու գործընկերների թիվը կավելանա, ովքեր տիկին Քլիֆորդի օրինակով կաջակցեն կենդանիների համար լավագույն պայմաններ ապահովելու վեհ գործին, իսկ Երևանի կենդանաբանական այգին կծառայի իր նպատակին՝ դառնալով հանրության կրթության և դաստիարակության վայր», - իր խոսքում նշում է Ռուբեն Խաչատրյանը:

Տիկին Լուսինեն երկար տարիներ Հայաստանում չէր եղել, որոշել էր հունիսի 1-ին թոնկիների հետ այցելել Երևանի կենդանաբանական այգի, «Շնորհակալություն ենք հայտնում կազմակերպիչներին՝ նմանատիպ գեղեցիկ միջոցառումներ կազմակերպելու համար: Ես մեծ բավականություն ստացա, քանի որ այսօր տոն էր ոչ միայն երեխաների, այլև մեր՝ մեծահասակներիս համար»:

Կենդանաբանական այգին իր այցելուներին ներկայացավ նոր կենդանատեսակներով՝ պավիան համադրիկների նոր ընտանիքով և այդքան շատ սպասված սավաննայի վագրաձիով (գեբրով):

«Մենք շատ զարմացանք, երբ տեսանք զեբրին Երևանի կենդանաբանական այգում և անչափ ուրախացանք՝ տեսնելով մեր սիրելի բորենուն իր նոր, մեծ ազատավանդակում», - իր խոսքում նշում է Հրաչ Բարսեղյանն, ով իր տղաների հետ հունիսի 1-ին այցելել էր կենդանաբանական այգի:

Երեխաներին դիմավորեցին ծաղրածուները, կազմակերպվեցին թատերական ներկայացումներ, երգ ու պար, խաղ-մրցույթներ և մանկական համերգ տարբեր երաժշտական խմբերի ու մանկական համույթների մասնակցությամբ: Երևանի կենդանաբանական այգու տաղավարներում այցելուները հնարավորություն ունեցան ծանոթանալու «Ձու» մանկական ամսագրին, կենդանիների խնամակալության ծրագրին, ինչպես նաև այգու այլ նորություններին: Իսկ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) տաղավարում բազմաթիվ երեխաներ մասնակցեցին տարաբնույթ խաղ-մրցույթների, որի հաղթողն այս անգամ տասնհինգամյա Արթուր Հակոբյանն էր, ով արժանացավ գլխավոր մրցանակի՝ հեծանիվի:

Հիշեցնենք, որ հունիսի 1-ին, Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ, մինչև 16 տարեկան երեխաների մուտքը կենդանաբանական այգի անվճար էր:

Երևանի կենդանաբանական այգու ծառատեսակներն արդեն ունեն իրենց տեղեկատվական ցուցանակները



Կենդանաբանական այգու այցելուներն այսուհետ կարող են ճանաչել ոչ միայն այգու կենդանիներին, այլև տեղեկություններ ստանալ այգու տարածքում գտնվող ծառերի և բույսերի տեսակների, դրանց տարածվածության և կարևորության մասին:

Թեղի, ուռենի սպիտակ, սոսի արևելյան, հացենի արևելյան՝ այս և ավելի քան 20 տեսակ ծառերի մասին մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ տեղեկատվական ցուցանակների միջոցով, որոնք տեղադրված են Երևանի կենդանաբանական այգու ծառերի դիմաց:



Պրոֆեսոր Նորա Գաբրիելյանն, ով շուրջ 60 տարվա աշխատանքային փորձ ունի բուսաբանության ոլորտում, մասնագիտական խորհրդատվություն է ապահովում կենդանաբանական այգու բույսերի, տնկիների և այլ ծառատեսակների ընտրության հարցում:

Նշենք, որ 2013 թվականի գարնան ավելի քան 12 ծառատեսակ և շուրջ 150 թփեր ու ծաղիկներ են տնկվել այգու տարբեր հատվածներում:

Երևանի կենդանաբանական այգու վարրիներն իրենց հանգիստն անցկացնում են ամառային կղզում



Ամառվա այս հեղձուցիչ տապին Երևանի կենդանաբանական այգում բնակվող սովորական վարրիները ևս անցել են ամառային հանգստի: Արդեն 2 տարի է, ինչ այգում բնակվող վարրիներն իրենց ամառային հանգիստն անցկացնում են կղզում, բայց ոչ թե իրենց հայրենի Մադագասկարում, այլ Երևանի կենդանաբանական այգու ջրավազանի կենտրոնում կառուցված արհեստական կղզակում, որը առավելագույնս համապատասխանեցված է իրենց բնական միջավայրի կենսապայմաններին: Երևանի կենդանաբանական այգու վարրիներն երկուսն են՝ Կասյան և Գառֆալյոզը, որոնք Երևան են բերվել 2010 թվականին Ուկրաինայում գտնվող Լիկովյանի կենդանաբանական այգուց: Վարրիներն այգում «սիրահարվել» և ընտանիք են կազմել, որն ամրագրել են «հավատարմության» երդումով, ինչը հատուկ է այս կենդանատեսակների համար: Նախքան այս կղզյակ տեղափոխվելը Գառֆալյոզն ու Կասյան շուրջ մեկ տարի ապրել են նեղ, անհարմարավետ պայմաններում: Բայց ահա այդ անհարմարություններն այլևս անցյալում են, և այժմ վարրիներն ունեն ձմեռանոց, ինչպես նաև ամառային հանգստի համար նախատեսված վայր: Վարրիներն արդեն հասցրել են հարմարվել իրենց նոր բնակավայրին, որտեղ ապրում են իրենց հարևանների՝ արագիլների և կարապների հետ:



Վարրիները համարվում են աշխարհի ամենահին և միևնույն ժամանակ վտանգված տեսակներից և ընդգրկված են ԲՊՄՄ կարմիր ցուցակում «Խիստ վտանգված» (Critically Endangered) կարգավիճակով:

Սովորաբար վարրիներն ունենում են 2-ից 3 ձագ: Բազմացման շրջանը տևում է մայիսից-հունիս, իսկ հղիությունը՝ 90-ից 102 օր: Եզր, ձագերի անվտանգությունն ապահովելու համար բույն է կառուցում, իսկ արդեն 3 շաբաթական հասակում ձագերը սկսում են հետևել մորը: Վարրիներն ունեն երկար փարթած պոչ, վզին օձիք կամ բաշ, աղվեսանման դունչ և հաստ մորթի, կենդանի գանգաված 3,5-ից 4,5 կգ, կյանքի տևողությունը անազատ պայմաններում՝ 19 տարի:

Կենդանաբանական այգու կղզում սովորական վարրիների համար ստեղծված են հատուկ պայմաններ, նրանք ունեն ծածկ անձրևից պաշտպանվելու համար և ճոճեր՝ իրենց զբաղվածությունը ապահովելու համար: Մադագասկարյան էկզոտիկ մրգերին և բանջարեղենին սովոր այս կենդանիների սննդակարգը նույնքան հարուստ և բազմազան է: Նրանք սնվում են բրնձի, ոսպի շիլաներով, ինչպես նաև խտացրած կաթով պատրաստված հնդկաձավարի շիլայով, բանանով, նարնջով, խնձորով: Բանջարեղեններից ճաշակում են վարունգ, մաղադանոս, հազար: Չոր մրգերից նրանց սննդակարգում մշտապես առկա է չամիչը և խուրման:

Սովորական վարրիները շատ զգայուն են և առանց զույգի կարող են նույնիսկ հիվանդանալ, սակայն Երևանի կենդանաբանական այգում նրանց այս վտանգը չի սպառնում, քանի որ Կասյան և Գառֆալյոզը արդեն երեք տարի է, ինչ միասին են: